Արձանագրություն N 2.1
ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-20/1 ծածկագրով ՀՀ Ազգային ժողովի նոր մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

02.10.2020թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Արսեն Միրզոյան
Հանձնաժողովի անդամ՝ Աշոտ Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տաթևիկ Վասիլյան

1. ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցումների և պարզաբանման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար՝ ՀՀ Ազգային ժողովի նոր մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայության ձեռքբերման համար կազմակերպված N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 30.09.2020թ. ստացվել են հարցադրումներ:

1.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը հաստատում է տրամադրվելիք պարզաբանման հայտարարությունը (կցվում է):

1.3 Ելնելով երկրում առկա ռազմական դրության պայմաններից՝ պարզաբանման տեքստը բանավոր համաձայնեցվել է գնահատող հանձնաժողովի անդամների հետ և հաստատվում է միայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի աշխատակիցների կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Աշ. Գրիգորյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 2.1 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը N ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-20/1

30.09.2020թ. ստացված հարցումները և դրանց վերաբերյալ պարզաբանումը.

Հարցադրում 1

Փակ անցումը դեպի կից մասնաշենք ո՞ր հարկով է առավել առաջնային, կից մասնաշենքի ո՞ր հարկին է ֆունկցիոնալ առումով ավելի նպատակահարմար միացում տալ, ի՞նչ նպատակի է վերջինս ծառայելու:

Պարզաբանում 1

Փակ անցում տեղակայման նախընտրելի լուծումը և նպատակային նշանակությունը հրավերով սահմանված չեն, և թողնված են նախագծողի հայեցողությանը:

Հարցադրում 2

Հիմնական դահլիճները այցելուների ի՞նչ խմբի են սպասարկելու, արդյոք կարիք կա՞ մուտք ապահովել թե բակից՝ այցելուների, թե շենքից՝ աշխատակիցների սպասարկման համար:

Պարզաբանում 2

Հիմնական դահլիճների ֆունկցիոնալ առանձնահատկությունները և մուտքերի տեղակայումը հրավերով սահմանված չեն և թողնված են նախագծողի հայեցողությանը:

Հարցադրում 3

Հիմնական մոտեցումը/ները քանի՞սն են և տարածքի ո՞ր հատվածներից են իրականացվելու: Եթե հնարավոր է տեղում նայել ֆոտո անել:

Պարզաբանում 3

Հիմնական մոտեցումների տեղակայումը և քանակը հրավերով սահմանված չեն, և թողնված են նախագծողի հայեցողությանը: Տեղում լուսանկարներ անելու վերաբերյալ առաջարկում ենք դիմել հետևյալ կոնտակտով:

Աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Սամվել Լեւոնի Մելիքսեթյան
Հեռ. (374-11) 513641
Էլ. փոստ samvel.meliksetyan@parliament.am

Հարցադրում 4

Հարավային ֆասադի, վերջինիս բացվածքների վերաբերյալ արդյոք սահմանափակում կա անվտանգության նկատառումներից ելնելով:

Պարզաբանում 4

Հարավային ճակատի վրա բացվածքների վերաբերյալ հրավերով սահմանափակում չկա, դրանք կսահմանվեն ճարտարապետահատակագծային առաջադրանքով:

Հարցադրում 5

Խնդրում եմ տրամադրել գոյություն ունեցող շենքերի ֆասադների գծագրեր նիշերը հստակ հասկանալու համար:

Պարզաբանում 5

Պահանջվող տեղեկատվությունը հրապարակման ենթակա չէ, առաջարկում ենք առաջնորդվել հրավերով ներկայացված լուսանկարներով, կամ լուսանկարել տեղում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-20/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Տաթևիկ Վասիլյանին:

Հեռախոս՝ 011621821
Էլ.փոստ՝ tender2@minurban.am

ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով